

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի մասին

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիների համար՝

Երթուղու					
Անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	տեսակը	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների (միկրոավտոբուսների) թիվը	
1	Կաքավաձոր-Թալին	Կաքավաձոր	Թալին	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2

Ցանկ

Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի

- Հայտ
 - Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
 - Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
 - Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր.
 - Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
 - Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
 - Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահահագործելու համար վերասարքավորելու դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
 - Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
 - Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքում.
 - Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակալանի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
 - Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փողադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:
- Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում է մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը

պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝իսկականի հետ ճիշտ է՝ գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ իսկականի հետ ճիշտ է՝ գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթը անցկացվում է 2014թ նոյեմբերի 7-ին ժամը 12.00-ին՝ Աշտարակի ԱՏՃ՝ ՓԲԸ-ում
Հայտերը ընդունվում են ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնում ամեն օր ,բացի շաբաթ և կիրակի օրերից ժամը 9.00-ից մինչև ժամը 18.00-ն:

Հայտերը ընդունվում են մինչև 2014թ-ի նոյեմբերի 4-ը ժամը 18.00-ն:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել /0232/ 3-28-57

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2001թ օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողով